

ԵՆԹԱՏԵՔՍԸ ԵՎ ԱԿՆԱՐԿԸ ՈՐՊԵՍ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՆԵՐԻՄԱՍԻ
ԱՐՏԱՅԱՅՏՄԱՆ ԵՎ ԸՆԿԱԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

<https://doi.org/10.59982/18294359-23.14-ea-13>

Նարինե Գագիկի Մանուկյան

բ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ, Անգլերենի թիվ 2 ամբիոն

ՅԵՀ, Լեզուների ամբիոն

manukyannarine@ysu.am

Ամփոփագիր

Սույն հետազոտությունը նվիրված է երկխոսության մեջ կանխամտածված ներիմաստի արտահայտման և ընկալման ձևերից երկուսի՝ ենթատեքստի և ակնարկի ուսումնասիրությանը, դրանց արտահայտման լեզվական և արտալեզվական առանձնահատկություններին, դրսևորման բնույթին և յուրահատկություններին: Խոսքերն արտահայտում են մեր մտքերը, արտացոլում են մեր հույզերը, դիտավորություններն ու զգացմունքները, որոնք դեմառդեմ խոսակցության ժամանակ դրսևորվում են նաև հարալեզվական միջոցներով, ուստի՝ անդրադարձ է կատարվում նաև խոսքարտաբերման հնչյունական արտահայտչաձևերին՝ տոնայնությանը, առոգանությանը և արտալեզվական միջոցներին՝ ժեստեր, դիմախաղ:

Աշխատանքում կանխամտածված ներիմաստի ընկալման համար դիտարկվում են նաև «անձի ենթատեքստ» և «խոսքի ենթատեքստ» հասկացությունները՝ խոսակցի (խոսակիցների) դիտավորությունների և ոչ դիտավորությունների բացահայտման համար: Երկխոսության բնույթը, զարգացումն ու ընթացքն անմիջականորեն պայմանավորված են խոսքի ճիշտ կամ սխալ, ամբողջական կամ մասնակի ընկալմամբ: Հետևաբար, կարելի է ասել, որ երկխոսության յուրաքանչյուր բառ, արտահայտություն կամ նախադասություն բխում է խոսակցի նախորդ խոսքի իմաստի ընկալումից և հանդիսանում է դրա տրամաբանական շարունակությունը:

Հոդվածում քննության են առնվում և օրինակներով հիմնավորվում նաև ներիմաստի բացահայտման այն միջոցները, որոնք պայմանավորված են խոսակցի ընկալմամբ, ինչպիսիք են՝ կրկնությունը, պարզաբանող հարցերը, հույզերի դրսևորումը և այլն: Այս միջոցները շեշտը դնում են խոսակցի ընկալման վրա և հիմք են հանդիսանում երկխոսության հետագա շարունակելիության համար:

Հիմնաբառեր. Ենթատեքստ, ակնարկ, կանխամտածված ներիմաստ, դիտավորություն, ժեստեր, արտալեզվական միջոցներ:

Ներածություն

Հաղորդակցական նպատակներով խոսքարտաբերումը լեզվագաղտածման այն բնա-

զավառն է, որտեղ միջանձնյա հարաբերությունները, անձի «որակներն» ու արժեքային համակարգը մեծ ազդեցություն ունեն խոսքի

շարադրման և արտահայտման ձևերի վրա՝ միաժամանակ հիմք հանդիսանալով խոսքային մտադրությունների ոչ բացահայտ միջոցներով իրագործման համար: Կանխամտածված ներհմաստի արտահայտումը կատարվում է հիմնականում երկու լեզվական երևույթների միջոցով՝ ենթատեքստի և ակնարկի: Հետևաբար, ներակայման ընկալման հիմնական նախապայմանը ենթատեքստի կամ ակնարկի ճիշտ ընկալումն է, որոնք, պայմանավորված լինելով կանխամտածված ներհմաստի արտահայտման պատճառներով, համապատասխանաբար իմաստավորում են խոսքը:

Ինչպես գիտենք, միտումնավոր ներակայումը խոսքում հայտնի է կանխամտածված ներհմաստ անվանմամբ, որի թե՛ արտահայտման, թե՛ ընկալման նախապայմաններից մեկը, ինչպես արդեն նշվել է, ենթատեքստի առկայությունն է: Առհասարակ, ենթատեքստը սահմանվում է որպես խոսքի ներակայված, տողատակային, փոխաբերական, թաքնված իմաստ, որը տեսանելի չէ, սակայն լսելի է [Subtext definition]: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ թեև խոսքում ենթատեքստը խոսքարտաբերման *տոնայնություն, առոգանություն* շնորհիվ միայն լսելի է, դեմ առ դեմ խոսքարտաբերման ժամանակ այն կարող է ունենալ նաև որոշակի «տեսանելիություն»՝ ուղղակիորեն ասված խոսքը բովանդակող արտալեզվական երանգավորում, որով պայմանավորված է արտաբերված խոսքի իմաստավորումը: Արտալեզվական երանգավորում ասելով՝ նկատի ունենք *դիմախաղը, ժեստերը* և այլն: Այս երանգավորումների շնորհիվ ենթատեքստն առավել ընկալելի է դառնում: Ուստի, կարելի է ասել, որ ենթատեքստ կարող է արտահայտվել ինչպես մակերևութային կառուցի տողատակերում, այնպես էլ դրանից դուրս՝ երկու դեպքում էլ նպաստելով խոսքի իմաստավորմանը:

Հատկանշական է, որ թեև վերոնշյալ գործոնները՝ տոնայնությունը, առոգանությունը, դիմախաղը, ժեստերը պայման են հանդիսանում ենթատեքստի ընկալման համար, երբեմն խոսողը, ինչպես կտեսնենք օրինակներում, ներհմաստն ընկալելի դարձնելու համար խոսքի իմաստն ընդգծում է որոշ ոճական հնարներով՝ կրկնություն, փոխաբերություն, համեմատություն և այլն, անուղղակի խոսքային ակտերով, հակամիջբառերի գործածմամբ, որոնք հիմք են հանդիսանում ներհմաստի տեսակների տարբերակման համար: Այսպիսով, խոսողը վերոնշյալ «համեմունքների օգնությամբ» նպաստում է ներհմաստի ճիշտ մեկնաբանությանը:

Ինչպես իրավացիորեն նկատում է Լ.Ս. Վիգոտսկին՝ ենթատեքստը երկխոսության աներևույթ բովանդակության այն բաղադրիչն է, որն ամբողջացնում է այն, ինչ մենք իրականում ասում ենք, ինչ նկատի ունենք: Դրա միջոցով խոսքում ներակայվում են խոսողի իրական խոսքային մտադրությունները [Vygotsky, 1988]: Ենթատեքստով է պայմանավորված նախադասության հնարավոր ներակայված իմաստների կռահումը: Խոսողը խոսքն արտաբերում է որոշակի ենթատեքստով՝ ակնկալելով, որ խոսակիցը «կհասկանա» այն և դրանից բխող ներհմաստները: Ուստի, խոսակցի կողմից ենթատեքստի ընկալումը հնարավորություն է տալիս նրան ավելի ճշգրիտ վերականգնել խոսքի ներհմաստը:

Ենթատեքստի միջոցով խոսողը գիտակցաբար է ներհմաստավորում խոսքը, քանի որ ենթատեքստը խոսքարտաբերման այն բաղադրիչն է, որը ցանկության դեպքում կարելի է թաքցնել: Այդ է պատճառը, որ ենթատեքստը կարելի է համարել հենց կանխամտածված ներհմաստի արտահայտման միջոց: Այս հիմնավորմամբ, կանխամտած-

ված ներհմաստի ուսումնասիրության շրջանակներում ենթատեքստը կփորձենք դիտարկել որպես խոսքը ներհմաստավորող, անուղղակի արտահայտչամիջոց, որի նպատակն է գիտակցաբար խոսափել տեղեկատվության՝ բացահայտ միջոցներով հաղորդումից և ձեռք բերումից:

Մեր կատարած դիտարկումների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ ենթատեքստով խոսքարտաբերման պատճառները կարելի է նույնացնել կանխամըտածված ներհմաստի արտահայտման պատճառների հետ: Ուստի, քաղաքավարությունը, զգուշավորությունը և տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունը (հետաքրքրասիրությունը) այն հիմնական պատճառներն են, որոնք ընկած են խոսքի՝ ենթատեքստով, ոչ թե ուղղակի խոսքային միջոցներով արտաբերման հիմքում:

Փաստական նյութի և լեզվաբանության մեջ հայտնի ենթատեքստի տեսակների քննությունը թույլ է տալիս նկատել, որ ենթատեքստի միջոցով խոսողը ներակայում է իր հույզերն ու զգացմունքները և դրանցով պայմանավորված զգացողությունները, հոգեվիճակը և վերաբերմունքը անձանց և երևույթների նկատմամբ: Այսինքն, խոսողի հույզերը նախապայման են հանդիսանում ենթատեքստ պարունակող խոսքի արտաբերման համար: Այս հիմնավորմամբ աշխատանքում փորձել ենք տարբերակել **«անձի ենթատեքստ»** և **«խոսքի ենթատեքստ»** հասկացությունները:

«Անձի ենթատեքստ» ենք համարում խոսքն արտաբերողի բնավորության, անձնական/սուբյեկտիվ վերաբերմունքի, որևէ իրադարձությամբ/եղելությամբ պայմանավորված պատճառների ամբողջությունը, ինչն էլ առաջացնում է հույզեր և զգացմունքներ: «Անձի ենթատեքստի» պատճառներն անձից անկախ են ձևավորվում: Այստեղ, թերևս, հարկ է


հիշատակել ականավոր հոգեբաններ Վ.Ատկինսոնի և Է. Բիլսի հետևյալ տեսակետը. *«Անձի մոտ հույզեր է առաջացնում այն ամենը, ինչ «չի ընդունում» նրա ենթագիտակցությունը»* [Atkinson & Beals]:

«Խոսքի ենթատեքստը» արտահայտում է «անձի ենթատեքստը»: Այն պահից, երբ «անձի ենթատեքստը» արտահայտվում է խոսքում, դառնում է «խոսքի ենթատեքստ»: Այլ կերպ ասած, «խոսքի ենթատեքստը» ներակայման միջոցով խոսքի տողատակերում, ոչ բացահայտ արտահայտված «անձի ենթատեքստն» է իր հնարավոր դրսևորումներով, որի արտահայտման նպատակը խոսողի կողմից իր խոսքի դիտավորյալ/կանխամտածված ներհմաստավորումն է: Կարելի է ասել, որ «խոսքի ենթատեքստը» միտումնավոր ներակայված խոսքային մտադրությունների ամբողջությունն է, քանի որ յուրաքանչյուր ոք գիտի, թե ինչ է ցանկանում ասել, և իր խոսքով փորձում է պլանավորված հաղորդագրություն հասցնել խոսակցին: Ուստի, տարբեր «խոսքի ենթատեքստերով» արտաբերման դեպքում նույն նախադասությունը տարբեր ներհմաստներ կարտահայտի:

Ակնհայտ է, որ «անձի ենթատեքստը» և «խոսքի ենթատեքստը» փոխկապակցված են, քանի որ վերջինս անմիջականորեն բխում է «անձի ենթատեքստից»: Այսինքն, «խոսքի ենթատեքստի» արտահայտումը պայմանավորված է խոսող անձի հույզերով ու զգացմունքներով, դրանց արդյունքում ձևավորված վերաբերմունքով, զգացողություններով և հոգեվիճակով, որոնք ենթատեքստի արտահայտման պատճառների առկայության դեպքում անձին դրդում են անուղղակի խոսքարտաբերման: Յետևաբար, այն, ինչ խոսողի «ներսում» առաջանում է ինքնըստինքյան, նրա խոսքում ներակայվում է իր ցանկություններով:

«Անձի ենթատեքստի» և «խոսքի ենթատեքստի փոխկապակցվածությունն ու պատ-

ճառահետևանքային կապը կարելի է պատկերել հետևյալ աղյուսակով.



Ակնարկը ևս կանխամտածված ներիմաստի արտահայտման միջոցներից է: Ըստ բառարանային սահմանման՝ **ակնարկը** լեզվական երևույթ է, որը սահմանվում է որպես ներակայված, անուղղակի, թաքնված վերաբերություն [Oxford Dictionary of English]: Այն իրողության վերաբերյալ ոչ անմիջական բառացի միջոցներով «արտահայտվելն է»: Այս դեպքում, թեև խոսողն ուղղակիորեն չի արտահայտվում, սակայն որևէ բառի/բառակապակցության միջոցով ներակայում է իրական իմաստը:

Սովորաբար ակնարկը կատարվում է խոսողի և խոսակցի ունեցած ընդհանուր գիտելիքների շուրջ, այսինքն այն անձանց, իրերի, հասկացությունների և երևույթների, որոնք երկուսին էլ հայտնի են: Ակնարկը կարող է վերաբերել ինչպես խոսողին, այնպես էլ խոսակցին: Այսինքն, խոսողը կարող է ակնարկել այն հասկացությունների մասին, որոնց մասին, կանխամտածված ներիմաստի արտահայտման վերոնշյալ պատճառների առկայության դեպքում, չի կարող ուղղակիորեն ասել:

Փաստական նյութի քննությունը հիմք հանդիսացավ եզրահանգելու, որ թեև ցանկացած գործածման դեպքում ակնարկն ուղղված է խոսակցին, խոսողն այն կիրառելիս որոշակի նպատակներ է հետապնդում:

Այսինքն, այն կարող է «բխել խոսողի կամ խոսակցի շահերից»: Ըստ այդմ, կանխամտածվածության տեսանկյունից դիտարկելիս ըստ նպատակային ուղղվածության՝ ակնարկները բաժանել ենք երկու հիմնական խմբերի.

1. խոսակցին ուղղված՝ հենց (խոսակցին) վերաբերող ակնարկ.

- A. You want those new clothes?
- B. Yiss.
- A. You want to come to school?
- B. Yiss.
- A. *Then you're going to take a bath...*
- B. (after having a bath) *Like yourself?*
- A. Look too much good.
- B. *We're going to do this once a week.* [Specht, 116]

Այս օրինակում խոսողը նկատում է իր հնդկացի աշակերտի շաբաթներ շարունակ չվացած մագերը, հագուստները և թե ինչպես են ուրիշները վերաբերվում նրան այդ պատճառով: Նա, քաղաքավարությունից ելնելով, փորձում է տղային այնպես հուշել այդ մասին, որպեսզի չվիրավորի նրան և դիմում է ակնարկին: Նա *bath* լեզվական միավորով արտահայտում է նախադասության հիմնական ներիմաստը, այսինքն՝ ներիմաստն ընկալվում է այս բառի կանխավարկածի՝ վերանվանական բնութագրիչների շնորհիվ, որոնք թույլ են տալիս ենթադրել հետևյալ ների-

մաստները` *You are dirty to wear new cloths, You need to take a bath, Look how nice you are when you are clean, You should take a bath without other's saying, etc.*: Օրինակում ակնհայտ է, որ խոսողն ակնարկում է «ի շահ» խոսակցի` այդ կերպ նրան հուշելով իր թերութիւնը:

2. Խոսակցին ուղղված` խոսողին վերաբերող ակնարկ.

- A. *If I could go anywhere I'd go to Paris.*
- B. Paris is terrible. Everybody is impolite.

A. *I'd walk along the Seine, like they say in the song. – "You'll find your love in Paris, if you walk along the ...". I just think it sounds so romantic.* [Tyler, 99]

Տվյալ օրինակը միմյանց համակրող երկու անձանց երկխոսությունն է: Աղջիկը` խոսողը, գիտեր, որ տղան որոշել էր իրեն որևէ անակնկալ մատուցել և այդ մասին նախապես հայտնել էր աղջկա ծանոթներից մեկին: Ուստի նա, խորամանկություն ցուցաբերելով, *If I could go anywhere I'd go to Paris* ըղձական նախադասությամբ, որը հակափաստարկային կանխենթադրույթ է և *I* դերանվան կանխավարկածի միջոցով խոսակցին ակնարկում է Փարիզ գնալու իր երազանքի մասին` հուշելով, թե ինչ անակնկալ կցանկանար, որ խոսակցին մատուցեր իրեն` ակնարկում ներակայելով հետևյալ հնարավոր ներիմաստները` *Could you (somehow) help me to get to Paris? Would you take me to Paris?*

Երկխոսության ժամանակ իրենց խոսքային մտադրությունները հաճախ ակնարկով են արտահայտում թե՛ խոսողը, թե՛ խոսակցին:

- A. Louetta I think you are the nicest thing I know.
- B. Well, I think you are very nice.
- A. Do you? You got to like me! *I'm so lonely!*
- B. *Oh you'll be all right when your wife comes home.*

A. *No. I'm always lonely.* [Lewis, 225]

Երկխոսության ընթացքում խոսողը, նկատելով խոսակցի համակրանքն իր

նկատմամբ, *I'm so lonely* արտահայտությամբ ակնարկում է նրան իրեն ընկերակցելու մասին` նկատի ունենալով *I would like to flirt with you* ներիմաստը: Խոսակցին ընկալում է նրա ակնարկը և իր *you'll be all right when your wife comes home* նախադասությամբ ներակայում է *I don't want you to leave me after the arrival of your wife* իմաստը, որը խոսակցին ըմբռնում է` իր հաջորդ խոսքում ներակայելով հետևյալ իմաստը` *We can be together even when my wife is here*: Այս դեպքում *lonely* բառի արտահայտած կանխավարկածին հակադրելով *your wife* բառակապակցության գոյաբանական կանխենթադրույթը` *you have a wife*, խոսակցին ցանկանում է ճշտել, թե խոսողն իրականում ինչ նկատի ունի, իսկ այն փաստը, որ խոսողը հաստատում է կնոջ ներկայության դեպքում իրեն միայնակ զգալը, «փարատում է» նրա ներակայված առաջարկի վերաբերյալ խոսակցի ունեցած կասկածները:

Հարկ է նշել, որ ակնարկը կարող է արտահայտվել նաև միայն արտալեզվական դրսևորմամբ` ծիծաղով, դիմախաղով, ժեստերով և այլն:

- A. *What was funny about my artichoke plate?*
- B. Oh, nothing.

A. *I won't be hurt. What was funny?* [Tyler, 174]

Օրինակում խոսողը նկատում է խոսակցի անթաքույց ծիծաղը, ինչն ապացուցում է, որ նա, թեև լեզվական միջոցներով չարտահայտվելով, անքաղաքավարության դրսևորմամբ ներակայում է իր կարծիքը: Այս դեպքում ծիծաղը հնարավորություն է տալիս խոսողին ընկալել խոսակցի հետևյալ հնարավոր ներակայումը` *There is something strange or unusual about your artichoke plate that makes me feel funny*:

Կանխամտածված ներիմաստ ունեցող ցանկացած խոսք, անգամ ակնարկված խոսքը, հաճախ անվանում են ենթատեքստ

ուներցող խոսք, սակայն լեզվաբանության մեջ այս հասկացությունները տարբերակվում են: Ակնարկն ու ենթատեքստը խոսքում ներհմաստ արտահայտելու և այն ընկալելու միջոցներ են, իսկ ներհմաստն այն իմաստն է, որը խոսքից ընկալվում է ակնարկն ու ենթատեքստը հասկանալու շնորհիվ: Ակնարկի միջոցով խոսողը փորձում է խոսակցին «հուշել», «դրդել» որևէ գործողության/արարքի, իսկ ենթատեքստի միջոցով ցույց

տալ իր վերաբերմունքը, հոգեվիճակը, զգացողությունները: Ինչպես արդեն նշվել է, «խոսքի ենթատեքստի» ընկալումը պայմանավորված է «անձի ենթատեքստի» ընկալմամբ և ընկալելի է ինչպես խոսողի և խոսակցի համար, այնպես էլ ունկնդիրների, իսկ ակնարկի ընկալումը վերագրվում է խոսողին և խոսակցին հայտնի ակնարկվող հասկացության ընկալմանը:

Գրականության ցանկ

1. Atkinson W.W., “Beals E.E. Subconscious Power on Your Secret Forces”. USA: Cosimo Publishing, 2010.
2. Lewis S. “Babbitt”. USA: New York, 1961.
3. Oxford Dictionary of English. Oxford: Oxford University Press, 2010.
4. Specht R. “Tisha”. USA: Bantam Books, 1976.
5. Tyler A. “The Accidental Tourist”. New York: Berkley books, 1978.
6. Vygotsky L.S. “The Collected Works of L.S. Vygotsky: Problems of General Psychology”. Vol. I (Including the Volume Thinking and Speech). Berlin: Springer, 1988.
7. *Subtext* definition, 15.02.2023, www.merriam-webster.com/dictionary/subtext

SUBTEXT AND ALLUSION AS THE MEANS OF EXPRESSING AND COMPREHENDING INTENTIONAL IMPLICITNESS

Narine Manukyan

PhD, Associate Professor

YSU, English Chair 2

EUA, Chair of Languages

manukyannarine@ysu.am

Abstract

In this paper, we study intentional subtext and allusion in speech, referring to the characteristics of their expression and the nature and peculiarities of their manifestation as two main means of expression and comprehension of intentional implicitness. Our words express our ideas, thoughts, goals, and intentions, which, in the case of face-to-face conversations, are also embodied in cross-linguistic means; thus, the study also covers the phonetic aspects of verbalization of speech such as intonation and diction and extralinguistic means like gestures and mimics, etc.

In terms of studies over comprehension of intentional implicitness, the concepts of "personal implicitness" and "speech implicitness" are observed to cover the intentionality and unintentionality of speakers. The development and the process of dialogue are directly connected to the right or wrong, complete or partial, perception of the meaning of the speech. So, we can say that the comprehension of the speakers gives meaning to the dialogue and provides its development, thus proving, that each word is the logical continuation of the previous word, expression, or sentence.

In this paper, we also focus on some methods for covering the implicit meaning of the speech. Among them, special attention is paid to repetition, clarifying questions, expressing emotions, etc.

Keywords: Subtext, allusion, intentional implicitness, intentionality, gestures, extralinguistic means.

Ներկայացվել է՝ 20.03.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 20.04.2023թ.